№ 215 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25 **1898** ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25 № 215

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՑ **1899** ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(27-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 բ., ինն և ութ ամսվանը՝ 8 բ., եօթ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ. և մի ամսվանը՝ 1 բուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ»; իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զսպելու միջոցը. Քաղաքակրթութիւնը գէնքի ետևից. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակներ Մոսկվայից. Նամակ Երևանից. Նամակ Կաղզուանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երկու օր կոմս Լ. Ն. Տօլստոյի մօտ։

ԶՍՊԵԼՈՒ ՄԻՋՈՑԸ

—

Ամերիկայի Միացեալ-Նահանգների կառավարութիւնը երկու տարի սրանից առաջ մտադիր էր հիւպատոսութիւն հաստատել Փոքր-Ասիայի այնպիսի կարևոր կենտրօնում, ինչպէս է Երզրում քաղաքը, բայց անկարող եղաւ այդ մտադրութիւնն իրագործելու, որովհետև Բ. Դուռը չը համաձայնեց աւելացնել օտար կօնսուլեօրների թիւը իր երկրի մէջ։ Երկու ամերիկական դեսպաններ, որոնք յաջորդեցին միմեանց, չը կարողացան աջողեցնել իրանց կառավարութեան ցանկութիւնը։ Եւ միայն այժմ, սպանօ-ամերիկական պատերազմի յայտնի հետևանքներից յետոյ, ամերիկական նոր դեսպան Ստրաուս կարողացաւ ստանալ Թիւրքաց կառավարութեան համաձայնութիւնը նոր հիւպատոսութիւն հաստատելու մասին։ Կուբայի և Ֆիլիպեան կղզիների յաղթողների առաջ անհետացան այն արգելքները, որոնք այնքան ուժեղ էին երևում, երբ դեռ ամերիկեան թնդանօթները չէին ցոյց տուել իրանց կարողութիւնը։ Միայն կոպիտ ոյժի ուրուականը կարողացաւ համոզեցուցիչ լինել և դառնալ հեղինակութիւն, որի առաջ խոնարհվեց օսմանեան կառավարութեան դիմադրութիւնը մի այնպիսի ինքն ըստ ինքեան չնչին խնդրում, ինչպէս է հիւպատոսութիւն հաստատելու խնդիրը։

Իսկ որքան աւելի կարևոր խնդիրներ սպասում են իրանց աջող լուծման։ Եւրոպան, ռուսաց Կայսրի հրաւէրով, պատրաստվում է դադարեցնել իր զինաւորումը և պայմանաւորվել միջազգային կնճռոտ հարցերի վերաբերութեամբ։ Այդ հարցերի մէջ կը լինեն անշուշտ այն կիսավայրենի և անկուլտուրական երկիրների վարչական գործերը, որոնք միջազգային բարդութիւնների պատճառ են դառնում։ Եւրոպան պէտք է պարտաւորեցուցիչ համարի այդպիսի երկիրների համար այն սկզբունքները, որոնք արդէն վաղուց դարձել են եւրոպական պետութիւնների կեանքի հիմունքը։ Այդ սկզբունքներն են՝ կրօնական և ցեղական համբերողութիւն, կեանքի և գոյքի ապահովութիւն, տեղական վարչական բարենորոգութիւններ և արդար դատավարութիւն։ Երբ զինաւորական ոյժը, ամբողջ Եւրոպայի անունից, պատրաստ կը լինի այդ սկզբունքների պաշտպան հանդիսանալ բոլոր այն երկիրներում, որտեղ նրանք փոանգված կը լինեն, այն ժամանակ կարելի է յուսալ, որ կը պակասի միջազգային կնճռոտ հարցերի մի ամբողջ շարք։ Եթէ երբ և իցէ զինաւորական ոյժը կարող է արդար և համակրելի գործ կատարած լինել, այդ այն ժամանակ կը լինի, երբ նա առաջ կը դայ կործանելու այն դրութիւնը, որտեղ տիրում է ամեն տեսակ անարդարութիւն, և հաստատելու այնպիսի վիճակ, որտեղ կոպիտ ոյժը չի լինի հասարակական գործերի կարգադրողն ու պայմանաւորողը։

Մեր դարի պատերազմների մեծ մասի պատճառները եղել են արդարութեան սկզբունքների խախտումները, ազգերի և ցեղերի բարոյական իրաւունքների բացասումը և մարդկային անհատականութեան ճշումը։ Թո՛ղ Եւրոպան ապահովի մարդկութեան կանոնաւոր զարգացման պայմանները և ապա զինաթափ լինի։

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՁԵՆՔԻ ԵՏԵՒԻՑ

—

Օգոստոս ամսին անգլիացիները արևնահեղութեամբ նուաճեցին Սուդանը։ Այժմ գեներալ Կիտչենէր, դէրվիշների փառաւորված յաղթողը, երկրորդ քայլն է անում իր գործն ամրապնդելու համար. բայց այս անգամ այլ ևս զէնք չը կայ նրա ձեռքին. զօրապետը վերջացրել է իր դերը և այժմ հանդէս է գալիս իբրև քաղաքակրթի մարդկութեան մի անդամ։ Լօնդօնից ռուսաց լրագիրներին հեռագրում են, որ Կիտչենէրի առաջարկութեամբ նուէրներ են հաւաքվում Սուդանի Խարդում քաղաքում կօլէջ բաց անելու համար։ Անգլիական կառավարութիւնն ընդունել է այդ առաջարկութիւնը և ամբողջ գործը դրված է Վիկտորիա թագուհու հովանաւորութեան տակ։ Նշանակում է թէ Սուդանը չուտով կունենայ բարձրագոյն դպրոց, որի միջոցով եւրոպական քաղաքակրթութիւնը կը ըսկսի տարածվել Աֆրիկայի այդ վայրենի անկիւնում, ուր մինչև այժմ բռնացած էր մահմեդական ֆանատիկոսութիւնը, որ այնքան սարսափելի է, երբ միանում է տեղացիների վայրենութեան հետ։

Եւրոպական ազգերը իրանց ամբողջ եռանդը դործ են դնում նուաճումներ անելու, նոր երկիրներ ձեռք բերելու համար։ Ընդհանուր մարդկայնութեան տեսակէտից այդ ջանքերը կշիռ և նշանակութիւն կարող են ստանալ միայն այն դէպքում, երբ նրանք հատապատասխանում են

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ՕՐ ԿՈՄՍ Լ. Ն. ՏՕԼՍՏՕՅԻ ՄՕՏ

II

Լեվ Նիկոլայեվիչ ինձ ծանօթացրեց իր դերդաստանի ներկայ եղող անդամների հետ և բոլորս նստեցինք ճաշի։ Կոմս Տօլստոյ իբրև բանջարակեր՝ պատուան կերակուրներ կերաւ. իսկ դերդաստանի միւս անդամները ուտիսի կերակուրներով բաւականացան։

Ճաշից յետոյ ես և Լեվ Նիկոլայեվիչ մնացինք դահլիճում, որտեղ և ճաշել էինք։ Խօսակցութեան ժամանակ ես խնդրեցի հռչակաւոր գրողին յայտնել ինձ, թէ ինչ կարծիք ունի նա թեան ժամանակ ես խնդրեցի հռչակաւոր գրողին յայտնել ինձ, թէ ինչ կարծիք ունի նա հայերի մասին։

—Հայ ազգը,—ասաց Տօլստոյ—շատ ընդունակ ազգ է, մանաւանդ լեզուագիտութեան մէջ։ Ասացէք խնդրեմ, դուք քանի լեզու գիտէք։

—Թերի կերպով գիտեմ՝ հայերէն, տաճկերէն, ֆրանսերէն և գերմաներէն։

—Ճանաչում էք Գրիգոր Զանչեանին։

—Անձամբ չեմ ճանաչում, բայց նրա գրուածքներից մի քանիսը կարդացել եմ։ Մանաւանդ նրա խմբագրած «Братская Помощь» գիրքը մեծ ժողովրդականութիւն ստացաւ։

Այս առիթով կոմս Տօլստոյ ինձ ասաց.

—Եթէ եւրոպական պետութիւնները կամենային, թիւրքահայերն այնքան դժբաղդ չէին լինի։

Նոյն օրը, երեկոյեան, ընթրիքի ժամանակ, Լեվ Նիկոլայեվիչ ծանօթացրեց ինձ իր որդու հետ, որի աշխատութիւնները յաճախ երևում են «Недѣля» շաբաթաթերթի և նրա յաւելուածների մէջ։ Այս անգամ էլ ես խօսակցութեան մէջ յիշեցի թիւրքահայերի դրութիւնը և խնդրեցի Լեվ Նիկոլայեվիչին յայտնել, թէ ինչ է կարծում նա, ինչ ճանապարհով կարելի է բարւոքել թիւրքահայերի այժմեան աննախանձելի դրութիւնը։ Նա ինձ պատասխանեց.

—Ամենահիմնաւոր ճանապարհն այս է. եւրոպական ազգերը պիտի ամեն կերպ աշխատեն դաղանաբարոյ քիւրդ ազգի մէջ տարածել գիտութիւններ, լուսաւորութիւն և ժարդասիրութիւն։ Միւս կողմից՝ ստիպելու չափ պահանջել սուլթանից, որ սա արհեստական կերպով չը դրդռէ իր ժողովրդին կրօնամոլութեան զէնքով ընդդէմ խաղաղասէր և երկրագործ հայերի։ Այս բարենպատակ գործի մէջ մեր պետութիւնը կարող է մեծ դեր կատարել։

—Եւ ամենից առաջ եւրոպական պետութիւնները, իմ կարծիքով, պիտի դաղանաբարոյ քրդերին զինաթափ անէին, ասացի ես։

Միւս օրը, առաւօտեան, թէյ խմելուց յետոյ սկսեցի կարդալ Տօլստոյի ինձ տուած գրքերը։

Կէսօրվայ մօտ, Լեվ Նիկոլայեվիչ սենեակս մտաւ և հայրաբար ինձ հարցրեց՝ թէ քանիերորդ գիրքն է, որ ես կարդում եմ։ Ես նրան պատասխանեցի՝ թէ երրորդ գիրքն արդէն վերջացնում եմ։

—Այժմ գնանք Եասնայա Պոլեանա գիւղն այցելելու, ասաց նա.—ես այնտեղ ունեմ մի քանի հիւանդներ։

Ճանապարհին Լեվ Նիկոլայեվիչ ինձ պատմեց, որ իմ դալուց երկու օր առաջ Եասնայա Պոլեանա գիւղի բնակիչներից մէկի երեք աղջիկները խաղում են եղել անտառի մէջ, սառած լճակի վրա։ Երեխաները խաղալու ժամանակ վայր են ընկնում, սառուցը կոտրվում է և երեքն էլ ջուրն են ընկնում։ Բարեբաղդաբար, այդ միջոցին Տօլստոյի տան ծառան անցնելիս է եղել. դժբաղդութիւնը տեսնում և իսկոյն նետվում լճի մէջ և երեք երեխաներին էլ խեղդվելուց ազատում։ Անա այժմ մենք այդ հիւանդ երեխաներին այցելելու էինք գնում։

—Լեվ Նիկոլայեվիչ, Եասնայա Պոլեանա գիւղը ձերն է, հարցրի ես։

—Փառք Աստուծոյ, որ ես ոչինչ չունեմ։ Եասնայա Պոլեանան և ուրիշ իմ կալուածները իմ որդիներին և իմ կնոջ են պատկանում։ Հապա դուք. անշարժ կալուածք կամ ուրիշ սեփականութիւն ունիք։

—Ես բացի պարքից ոչինչ չունիմ։

—Ուրեմն դուք ինձանից էլ աւել Աստծուն փառք տալ կարող էք։

Այս միջոցին մենք արդէն անտառից դուրս եկնելու վրա էինք և մի քիչ հեռու, բլրի վրա, երևում էին փոքր և միջակ մեծութիւնով փայտաշէն տներ։

Ես հարցրի.

—Այս ինչ տներ են։

—Եասնայա Պոլեանա գիւղի տներն են։ Ես իմ կեանքում մի անուղղելի սխալ եմ գործել, որը երբէք մոռանալ չեմ կարող,—շարունակեց քիչ յուզված ձայնով աշխարհահռչակ հանճարը։—Ես իմ կալուածքները իմ ընտանիքին չը պիտի թողնէի, կարօտեաներ շատ կան...

Մի փոքրիկ տղայ՝ գիւղական խեղճ սահնակի մէջ կանգնած՝ մտրակում էր նիհար սպիտակ ձիուն և գնում էր գիւղի հիւսիսային կողմից դէպի հարաւային կողմը։ Երբ նա մեր մօտից անցնում էր, Լեվ Նիկոլայեվիչ բարձր ձայնով ասաց.

—Գրիշա, խեղդուելուց ազատված աղջիկներն ինչպէս են։

—Հայրիկ, նրանք լաւ են։

—Դու ո՞ւր ես գնում։

—Գնում եմ այն կարմիր տունը։

—Լաւ, գնա։

Կայտառ Գրիշան քշեց իր դանդաղաքայլ ձիուն դէպի վայր։

—Եասնայա Պոլեանա գիւղի ժողովուրդը հեռվհետէ իր փայտաշէն տները վերածում է աղիւսաշէնի. անա այդ տեսակ պտերից մի՛ը, ասաց ինձ Լեվ Նիկոլայեվիչ, ցոյց տալով մի տուն, որի մօտից անցնում էինք այդ միջոցին։

Երբ մենք արդէն մտել էինք Եասնայա Պոլեանայի մեծ փողոցը, մի գիւղացի պառաւ կին մեր դիմացը ելաւ։ Լեվ Նիկոլայեվիչ նրան հարցրեց.

—Քո դրացի հիւանդն ինչպէս է։

—Հայրիկ, բոլորովին լաւ չէ. բայց հեռվհետէ, կարծես, լաւանում է։

—Ես հիմա նրան հանդիպելու եմ։

Այս ասելուց յետոյ, Լեվ Նիկոլայեվիչ առաջ անցաւ։ Ես գնում էի նրա ետևից։ Քիչ ժամանակից յետոյ նա կանգնեց փլչելու մօտիկ մի փայտաշէն տան առաջ։ Դրսի պատը մի քանի նիցուկներով էր պահվում. նա բաւական դէպի դուրս էր ծռված։ Լեվ Նիկոլայեվիչ՝ առանց փորը ինչ տատանվելու՝ խսկոյն մտաւ այդ շատ վտանգաւոր տունը։ Թրախսուվելով Լեվ Նիկոլայեվիչի օրինակից, ես էլ անհերկիւղ ներս մտայ։

Լեվ Նիկոլայեվիչ սկսեց խօսել տանտիկնոջ հետ.

—Ի՞նչպէս է ամուսինդ։

—Լաւ է, հայրիկ։

Ամուսինը այդ ժամանակ վառարանի վրայից կանչեց.

—Փառք Աստուծոյ, լաւանում եմ այժմ։

—Ինչո՞ւ համար դուք ինձ առաջ իմաց չը տուիք ձեր տան խախուտ դրութեան մասին, ասաց Լեվ Նիկոլայեվիչ։

—Ես չը գիտեմ, հայրիկ, ասաց տանտիկինը՝ գլուխը վայր կախած։

—Ես կը խօսեմ գիւղապետի հետ։

Այնուհետև դուրս եկանք այդ վտանգաւոր տանից, այստեղ ապրողներին առողջութիւն ցանկանալով։ Ներսի խեղդված օդից ազատվե-

քաղաքակրթության պահանջներին: Եթէ Եւրոպացին Աֆրիկայի, Ասիայի կամ Ամերիկայի մի անկիւն է մտնում լոկ իբրև շահագործող, լոկ կողոպտելու, հարստանալու նպատակով, այդ դէպքում նա մի անհամակրելի նուաճող է, մի շահախնդիր մարդ: Ուրիշ բան է, երբ նա իր զէնքի հետ մտցնում է իր նուաճած երկրի մէջ նաև լուսաւորության այն բարիքները, որ ինքն է վայելում: Այդտեղ նա արդէն հանդիսանում է մարդկութեան բարերար և նրա գործունէութիւնը դժբաղդութիւն չէ նուաճվողի համար, այլ կատարեալ բաղդ, երջանկութիւն: Մեր դարում հետզհետէ վերանում է գայլի բարոյականութիւնը. մարդկութիւնը հետզհետէ սովորում է այն մտքին, որ նուաճել՝ չէ նշանակում ստրկացնել, որ նուաճվածը չը պիտի արհամարհվի, չը պիտի անարգեկութեան միջոցով հնազանդվի իր տէրերին, այլ, ընդհակառակն, պիտի ներկայանայ իբրև մարդ, որ նոյնպէս կարօտ է զարգացման, ինչպէս և ինքը, յաղթողը, նոյնպէս իրաւունք ունի վայելել քաղաքակրթութեան բարիքները: — Եւրոպական նուաճումները, որոնք այդ տեսակ մարդասիրական նպատակների են հետևում, ի հարկէ, հեշտութեամբ կարող են կարճ ժամանակում կերպարանափոխել այն ազգերին, որոնք տգիտութեան, խաւարի մէջ մնալու դժբաղդութեան են ենթարկված:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՄՕՍԿՎԱՑԻՑ

X

Հին երգ

Էլի՛ չքաւոր հայ ուսանողներ, էլի՛ ուսանողական կարիքներ, էլի՛ օգնութիւն... Վերջ չը կայ, ինչ է, այդ հին երգին—կը բացականչեն, գուցէ, շատերը՝ կարդալով իմ այս նամակը: Այո՛, ընթերցող, էլի՛ հին երգ, և, տարաբաղդաբար, վերջ չը կայ այդ հին երգին: Նա ամեն տարի երգվում է նոր-նորից, մի և նոյն եղանակով, մի և նոյն ելևէջներով, որովհետև ամեն տարի էլ ուսանողին ապրել է հարկաւոր, անհրաժեշտ է հաց ուտել, քնելու անկիւն ունենալ, շոր հագնել, կարևոր գրքեր ու դասախօսութիւններ ձեռք բերել: Աւելացրէք այդ բոլորի վրա և՛ տարեկան երկու անգամ 50-ական ռուբլի համալսարանական ուսման վճարը—և ահա ձեզ պատրաստ է հոգսի ու կարիքի այն անվերջ երգը, որ ստիպված է երգելու հայ ուսանողութեան չքաւոր մասը: Եւ վերջապէս, ինչ զարմանք, ընթերցող: Մթթէ հայի ամբողջ կեանքը մի տեսակ երգարան չէ այդպիսի հին երգերի. երգեր, որոնց ծնել են թշուառութիւնը, տառապանքը, հազարաւոր հոգս ու կարիքը և որոնց յարատևութեան այնքան նպաստում է մեր հասարակական անտարբերութիւնը...

Եթէ հասարակութեան ապահով անդամի համար անախորժ, ձանձրացուցիչ է շարունակ լսել չքաւորութեան երգի ձայնը, որ այնպէս տխուր է հնչում և անտարակոյս վատ ազդում նրա ուրախ տրամադրութեան վրա,—հապա ինչ անել այդ նոյն հասարակութեան այն անդամը, որ տխրալուր երգի ոչ թէ լոկ լսողն է հանդիսանում, այլ—հեղինակը: Ի՞նչ պէտք է զգայ այն ուսանողը, որ այդ երգը երգում է մատաղ հասակում, հեռու հայրենիքից, հեռու իր սիրելիների և հարազատների շրջանից: Տրագիքական է խնդրողի վիճակը և ոչ թէ տուողի: Անվերջ բաղդաւոր կը համարէր իրան հայ ուսանողութիւնը, եթէ հարկադրված չը լինէր հասարակական օգնութեան դիմելու: Մեզ քաջ յայտնի է, թէ շատ անգամ ինչ ձևով ու եղանակով է արտայայտվում այդ հասարակական օգնութիւնը. ինչ բարոյական տանջանքներ է պատճառում նա մատաղ սրտերին: Մենք գիտենք, որ շատ յաճախ դժգոհութիւնները, վիրաւորանքները տատապատիկ ու հարիւրապատիկ աւելի են լինում, քան այն կօպէկները, որ մեր հասարակութեան ժլատ ու սառած ձեռքը ձգում է ընդհանրապէս կարօտեալների և մասնաւորապէս չքաւոր հայ ուսանողների դանձանակը: Սակայն ինչ արած... Ներկայումս դարձեալ սկսվել են ուսանողական կեանքի նեղ օրերը, հասել է ուսման առաջին կիսամեակի վճարի ժամանակամիջոցը. էլ չեմ յիշում ուրիշ շատ ու շատ ուսանողական անհրաժեշտ պէտքեր:

Մօսկվայի հայ ուսանողութիւնը պատրաստվում է այս տարի էլ իր կարօտեալ ընկերների օգտին մի երեկոյթ տալու, որը ուսանողներից միշտ խլում է այնքան թանկագին ժամանակ, այնքան աշխատանք: Երեկոյթի նիւթական աջողութիւնը դեռ ապագայի խնդիր է: Եւ մթթէ միայն այդ երեկոյթով կարելի է դարդին դարման անել: Ո՞ւմ պէտք է դիմի կարօտ ուսանող սերունդը, եթէ ոչ հասարակութեան և իր այն նախկին ընկերներին, որոնք մի ժամանակ օգտվել են ուսանողական դանձարանից: Բայց այս վերջինների մասին ամօթ է խօսել, որովհետև դրանք կեանքի մէջ ապահովութիւն ձեռք բերելով, ձեռքից բաց են թողել իրանց նամուսը...

Ուսանող սերունդը հասարակութեան զաւակն է—և այդ հասարակութեան վրա բարոյական պարտք կայ հոգալու իր զաւակի անյետաձգելի կարիքները: Թող մեր հասարակութիւնը փոքր ինչ խորախոհ վերաբերվի իր կեանքի ընթացքին. թող նա աչալուրջ նայէ իր շուրջը տիրող խաւարին: Մատաղ սերնդին ոյժ տալով, նա ոյժ է տալիս իրան: Մատաղ սերնդին օգնելով, նա նպաստում է իր զարգացման և առաջադիմութեան. նա ծառայում է իր մտաւոր հասունութեան և կեանքի այն լոյսին, որին կարօտ ենք քաշում մենք այնքան: Առաջ ենք բերում այստեղ նշանաւոր ռուս պրոֆէսօրներից մէկի՝ Զուպրովի խօսքերը, որ, ի միջի այլոց, արտասանեց նա անցեալ տարի Մօսկվայի ընդհանուր ուսանողական հանրակացարանների հիմնադրութեան օրը՝ խուռն բազմութեան ներկայութեամբ:

«Պէտք է ապահովել այն հարիւրաւոր երիտասարդների նիւթական վիճակը, որոնք այս հանրակացարանների պատերից դուրս կը մնան: Բայց այդ օգնութեան փափագը պէտք է բղխի ոչ լոկ կարօտեալ մարդկանց կարեկցելու զգացմունքից, ոչ լոկ բարի սրտի բուռն ձգտումից, սրտի, որ ուզում է թեթևացնել մատաղ եղբայրակիցների ծանր վիճակը: Իբրև հիմք օգնութեան պէտք է ծառայէ, բացի դրանից, այն գիտակցութիւնը, որ այդ օգնութիւնն ունի հասարակական բարձր նշանակութիւն: Չը պէտք է մոռանալ, որ ներկայումս բարձրագոյն ուսումնարանների նստարանի վրա նստող երիտասարդութիւնը իր ժամանակին ղեկավարելու է հայրենի երկրի նիւթական և հոգևոր կեանքը: Այժմեան ուսանողները ժամանակով պէտք է ուսուցանեն, բժշկեն, դատեն մեր զաւակներին: Այն մարդիկ, որոնց մենք ուզում ենք օգնել,—նրանց դիտութեան աստիճանից, եռանդից ու պարտաճանաչութիւնից պէտք է կախված լինի, թէ արդեօք մեր հայրենիքը չիտակ և հաստատուն կընթանա առաջադիմութեան շաւղով, թէ՞ նա կը սկսի թթուել ու դանդաղ շարունակել իր դոյութիւնը: Այն ինչ երիտասարդութեան ապագայ գործունէութեան եղանակը՝ բացի ուրիշ կողմնակի ազդեցութիւններից, զգալի չափով կախված է այն հանդամանքից, թէ ինչպէս է ապրում նա ներկայում:

«Այն երիտասարդը, որ ստիպված է իր ուսանողական տարիներն անցկացնել խոնաւ, սառը ընակարանում, բաւականանալ աղքատիկ, անսնունդ ճաշով, ամեն կիսամեակին զողալ երկիւղից, որ կարող է զրկվել համալսարանից՝ ուսման վարձը չը վճարելու պատճառով... այդ վիճակում դտնըվող երիտասարդը շատ քիչ յոյս է տալիս հասուն տարիներում հասարակական գործիչ դառնալու, գործիչ՝ առոյգ մարմնով ու հոգով... Անհատի և հասարակութեան կեանքում ամեն ինչ գտնվում է փոխադարձ կապակցութեան մէջ. այն բարիքը, որ մենք կը գործենք այժմեան երիտասարդութեան համար, այդ բարիքը հարիւրապատկված, զանազան տեսակ ձևերով ու եղանակներով կը վերադարձնվի մեր յետագայ սերունդներին»:

Թող հայ հասարակութիւնը, եթէ նա ճշմարիտ նախանձախնդիր է իր առաջադիմութեան և հասկանում է իր «էարն ու բարին», բերան սերտէ հեղինակաւոր մարդու այդ լուրջ մտքերը և անսպառ սիրով, օգնող ձեռքով ոյժ և թև տայ իր ծաղկահասակ ուսանող սերնդին:

Ալ. Ծատուրեան

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Նոյեմբերի 17-ին

Ուրախութեամբ արձանագրում ենք մեր նոր դումայի գործունէութիւնից մի օրինակելի քայլ:

Մեր դուման որոշումներից յետոյ արդէն գործի անցաւ և մինչև նոյեմբերի վերջը իր նախաձեռնութեամբ մեծ քանակութեամբ ցորեն պիտի դուրս բերի էժան գնով վաճառելու. այս մի մեծիմաստական երևոյթ է մանաւանդ ներկայ պայմաններում, երբ ցորենի գինը շարունակում է 38—40 ռուբլուց չիջնել: Դուման իր վերջին նիստերից մէկում, ցորենի արհեստական թանգութեան դէմ առնելու և կամակոր հացագործներին զսպելու նպատակով, որոշեց իր միջոցներից մեծ քանակութեամբ ցորեն առնել և էժան գնով վաճառ հանել, որը դլուխ բերելու համար հարկաւոր էր և՛ դրամ, և՛ ցորեն. ուստի որոշեց մի կողմից հետաքրքիր լինել և իմանալ ցորենի ամբարատեղերը և նահանգապետի միջոցով չափաւոր գնով գնել այդ ցորենները, իսկ միւս կողմից դիմել Պետական և Առևտրական բանկերին և խնդրել կրեդիտ քաղաքի անունից: Սակայն ցաւօք սրտի պէտք է ասել, որ Պետական բանկը մերժեց քաղաքի առաջարկը կրեդիտ բաց թողնելու, իսկ Առևտրական բանկի ճիւղը դիմեց այդ առիթով Թիֆլիսի խորհրդի կարծիքն իմանալու: Մինչդեռ դուման բանակցութիւնների մէջ էր բանկերի հետ, նահանգապետն ստիպված պահանջեց Հաջի Ավդիլից յանձնել դումային առքի գնով այն 300 խալվար ցորենը, որ նա գնել էր Էջմիածնից: Հաջի Ավդիլը ակամայ խոստացաւ տալ, իսկ դուման փող չունէր, որ տար ցորենի գինը. այդ պատճառով այսօր դումայի դահլիճում յատկապէս ժողով կայացաւ դրամ գտնելու համար: Մի քանի վաճառական ձայնաւորներ նկատի առնելով, որ բանկերը մերժում են կրեդիտ բաց թողնել, առաջարկեցին, որ քաղաքին օգնութեան հասնեն բանկերում կրեդիտ ունեցող ձայնաւորները: Այս առաջարկութիւնը հաւանութիւն գտաւ ձայնաւորների մէջ և իւրաքանչիւրն ստորագրեց որը մի հազար և որը երկու հազար. այդպիսով դումարը հասաւ քսան հազարի: Վաճառական-ձայնաւորներն իրանց հաշուով փող կը վերցնեն և կը յանձնեն քաղաքին, իսկ վերջինս կը վճարի տոկոսը, ի հարկէ վերադարձնելով դումարը որոշ ժամանակից յետոյ: Ճիշդ է, դրամ տուողներն առանձին զոհողութիւն չեն անում, բայց մի և նոյն ժամանակ օգնութեան են հասնում մեր տառապարդ էին կանգնած. մինը՝ կաղալով՝ մօտեցաւ Լեվ Նիկոլայեվիչին և խնդրեց դրամական օգնութիւն: Լեվ Նիկոլայեվիչ նրան պատասխանեց.

—Սիրելիս, երկու օր առաջ քեզ տրվեց երեք ռուբլի, այժմ նորից եկել ես: Չը լինի թէ փողը օղի ես տուել:

—Ոչ, ես հիւանդ եմ. դեղի տուի:

—Տրված փողը քեզ պէտք է բաւականանայ. գնա տուն:

Սա գլուխը կախած հեռացաւ գնաց: Մօտեցաւ մի ուրիշը և ասաց.

—Տէր, խոնարհաբար խնդրեմ բերել տուէք ինձ համար չքանչան, որ ես անցեալ օրը խեղդվելուց ազատեցի երեք աղջիկ:

Լեվ Նիկոլայեվիչ՝ ծիծաղելով պատասխանեց նրան.

—Սիրելիս, դու երեք մարդ ազատելով խեղդվելուց, Աստուծոյ դիմացը բարի գործ կատարեցիր, դու միայն Նրանից սպասիր վարձատրութեան: Նրա տուած կամ տալու վարձատրութիւնը մարդկանց տուած կամ տալու վարձատրութիւններից, չքանչաններից անհամեմատ բարձր է:

Այս խօսքերն ասաց և իսկոյն ներս մտաւ: Նախասենեակում, սեղանի վրա դրված էին շատ նամակներ և լրագիրներ, որոնք նոր էին ստացված: Ես շատ զարմացայ, որ այդքան նամակների մէջ մի հատ Ռուսաստանի նամակ չը կար:

—Լեվ Նիկոլայեվիչ, բոլոր նամակներն էլ արտասահմանից են. Ռուսաստանից ոչ մի նամակ չունէք:

—Այո՛, ինձ յարգողների մեծամասնութիւնը արտասահմանում է:

Ճաշից յետոյ ես իմ խորին շնորհակալութիւնը յայտնեցի նախ՝ Լեվ Նիկոլայեվիչին և ապա նրա հիւրասէր դերդաստանին՝ ինձ ցոյց տուած երկու օրվայ հիւրասիրութեան համար: Երկաթուղու դնացքը Եասենքի կայարանից պիտի դուրս գար երեկոյեան ժամի 6½-ին: Ժամի 4 լինելով՝ Լեվ Նիկոլայեվիչ կարդարեց, որ կառք լծվի ինձ համար: Ես իմ հրաժեշտը տուի և իջայ ներքնայարկը: Քիչ յետոյ վայր եկաւ և Լեվ Նիկոլայեվիչ ու ինձ ընծայեց իր յիշատակին հետևեալ գրքերը. 1) Душеспасительныя наставленія Св. Василія Великаго, 2) Фабіола, 3) Греческій мудрецъ Діогенъ, 4) Христосъ въ гостяхъ у мужика, 5) Римскій мудрецъ Эпиктетъ, 6) Французскій мудрецъ Власъ Паскаль, 7) Жизнь древнихъ христіанъ, 8) Чѣмъ помочь великому горю?

Ես շատ զգացուած էի աշխարհահռչակ ծերունու դէպի ինձ ցոյց տուած ուշադրութիւնից և ասացի նրան.

—Թոյլ տուէք ինձ այսուհետև ձեզ անուանել հայր:

—Ես եօթանասուն տարեկան եմ, իսկ դուք 50. ուրեմն ես ձեր հօր տեղ կարող եմ լինել: Այսուհետև դուք կարող էք միայն ինձ նամակներ գրել. ես էլ ձեր նամակներին կաշխատեմ պատասխանել:

Ես մօտեցայ նրան և խնդրեցի, որ թոյլ տայ ինձ որդիաբար նրա ձեռքը համբուրելու: Բայց նա թոյլ չը տուեց և միայն հայրաբար ինձ հետ համբուրվեց: Ճանապարհվելիս Լեվ Նիկոլայեվիչ ասաց, որ Եասենքի կայարանի պօստատան մէջ իր անունով կան ստացված երկու պատուիրված նամակներ և տալով ինձ պօստատան յայտարարութիւնները՝ ասաց.

—Իմ տեղ ստորագրվեցէք պօստատան մատեանի մէջ, ու ստանալով նամակները մեր կառավարի ձեռքով ուղարկեցէք ինձ:

Ես ուրախութեամբ յանձն առայ կատարել այդ խնդիրքը: Եւ նստելով Լեվ Նիկոլայեվիչի կառքը, հեռացայ իմ պաշտելի հանճարից...

Նոյն օրը երեկոյեան երկաթուղու դնացքը տանում էր ինձ դէպի Նոր-Նախիջևան:

Սրապիոն քահ. Սամուէլեան

ղում, ինձ թւաց թէ մի նոր աշխարհ մտայ: Լեվ Նիկոլայեվիչ շարունակեց իր ճանապարհը դէպի վայր և ասաց.

—Ահա կարօտեալներ. բնակարան անդամ չունեն: Որքան ցաւ է ինձ համար, որ նրանք ամառվանից ինձ ոչինչ չեն ասել իրանց տան խարխուլ դրութեան մասին. մերոնց պիտի ասեմ, որ այս խեղճերին օգնեն:

—Որքան մեր հոգին մխիթարվում է, երբ մենք ճշմարիտ կարօտեալին իր ժամանակին կարողանում ենք օգնել, ասացի ես:

Այս միջոցին մենք հասանք մի փայտաշէն հին տան մօտ: Լեվ Նիկոլայեվիչ իսկոյն դուռը բացեց և մենք միասին ձիւնոտ ոտքերով ներս մտանք:

—Սա այն տունն է, որի երեք զաւակները խեղդվելուց ազատվել են, ասաց Տօլստոյ.—ահա երկուքը քովէ քով նստած են, մինն էլ պառկած է քիչ հեռու: Ապա դիմելով տանտիրոջը, նա հարցրեց.

—Ի՞նչպէս են զաւակներդ:

—Երկուսը, փառք Աստուծոյ, արդէն բոլորովին առողջ են. երրորդը լաւանալու վրա է:

Լեվ Նիկոլայեվիչ մօտեցաւ երկու աղջիկներին և գլուխները փայփայելով ասաց.

—Ուրիշ անդամ լճի վրա խաղալու չը գնաք... Ապրես, աղջիկս, դու տղէն գուլպայ էլ ես գործում:

Վերջացնելով իր այցելութիւնը, Լեվ Նիկոլայեվիչ ուղևորվեց դէպի տուն: Ես հարցրի թէ ինչպէս է Եասնայա Պոլեանա գիւղը առհասարակ:

—Եասնայա Պոլեանան համարվում է միջակ գիւղերից մէկը. ամենաաղքատ գիւղերի նիւթական և մտաւորական դրութիւնը սրտաճմլիկ է:

Անբարոյականութեան մասին խօսելով, ես կամեցայ, իմանալ թէ ինչ կարծիք ունի Լեվ Նիկոլայեվիչ կանանց ազատութեան մասին և թէ արդեօք ճիշդ են ասում, թէ անբարոյականութիւնը այդ ազատութեան հետևանքն է: Ծերունի խօսակիցս ասաց.

—Մահմեդականների մէջ պոռնկութիւնը շատ աւելի պակաս է, քան թէ քրիստոնեաների մէջ: Մահմեդական կինը ընտանիքի մէջ շատ աւելի քիչ իրաւունքներ ունենալով, միշտ աւելի է զսպում իր քմահաճութիւնները, քան թէ քրիստոնեայ կինը, որ աւելի շատ իրաւունքներ ունի: Կռապաշտների կանայք եթէ դերիի, ճորտի պէս չը հնազանդեն իրանց տղամարդկանց, այն ժամանակ քրիստոնեայ պոռնիկ կանանցից շատ աւելի կը դերազանցեն պոռնկութեան և անբարոյականութեան կողմից: Այժմեան սոսկալի անբարոյականութեան առաջն այն ժամանակ կառնվի, երբ իւրաքանչիւր այր ու կինմարդ՝ համեմատ իր մտաւորական և բարոյական հասունութեան՝ իր իրաւունքները կընդլայնացնի թէ ընտանեկան և թէ հրապարակական գործունէութեան ասպարէզներում: Իսկ այժմ մենք ամենայն տեղ տեսնում ենք, որ անթիւ ու անհամար այր ու կին մարդիկ ոչ համեմատ իրանց մտաւորական ու բարոյական հասունութեան օգտվում են իրանց ուժից վեր իրաւունքով՝ «էմանսիպացիայով»:

Եւ յետոյ նա շարունակեց.

—Անցեալները ինձ պատահեց շրջել Մօսկվայի պասսաժի մէջ: Այնտեղի բազմաթիւ խանութների մէջ ես ուրիշ ոչինչ չը տեսայ, բայց եթէ կանանց շռայլասիրութիւնը յագեցնող նիւթեր... իսկապէս թէև շատ չնչին նիւթեր, սակայն դրեթէ բոլորը ես կանանց համար շատ մեծ նշանակութիւն ունեցող բաներ էին... Ես իմ կընոջ վաղուց կարող կը լինէի սովորեցնել ինձ նման պարզ հագնվելու, եթէ նրա ազգական իշխանուհիները այդ բանին արգելք չը լինէին... չը խանգարէին: Եթէ ես ողջ մնամ, մտադիր եմ շուտով կինմարդու վրա գրել այն, ինչ որ ունեմ ասելու:

Մենք հասանք տուն: Պատշգամբի մօտ երկու մարդ էին կանգնած. մինը՝ կաղալով՝ մօտեցաւ Լեվ Նիկոլայեվիչին և խնդրեց դրամական օգնութիւն: Լեվ Նիկոլայեվիչ նրան պատասխանեց.

—Սիրելիս, երկու օր առաջ քեզ տրվեց երեք ռուբլի, այժմ նորից եկել ես: Չը լինի թէ փողը օղի ես տուել:

—Ոչ, ես հիւանդ եմ. դեղի տուի:

—Տրված փողը քեզ պէտք է բաւականանայ. գնա տուն:

Սա գլուխը կախած հեռացաւ գնաց: Մօտեցաւ մի ուրիշը և ասաց.

—Տէր, խոնարհաբար խնդրեմ բերել տուէք ինձ համար չքանչան, որ ես անցեալ օրը խեղդվելուց ազատեցի երեք աղջիկ:

Լեվ Նիկոլայեվիչ՝ ծիծաղելով պատասխանեց նրան.

—Սիրելիս, դու երեք մարդ ազատելով խեղդվելուց, Աստուծոյ դիմացը բարի գործ կատարեցիր, դու միայն Նրանից սպասիր վարձատրութեան: Նրա տուած կամ տալու վարձատրութիւնը մարդկանց տուած կամ տալու վարձատրութիւններից, չքանչաններից անհամեմատ բարձր է:

Այս խօսքերն ասաց և իսկոյն ներս մտաւ: Նախասենեակում, սեղանի վրա դրված էին շատ նամակներ և լրագիրներ, որոնք նոր էին ստացված: Ես շատ զարմացայ, որ այդքան նամակների մէջ մի հատ Ռուսաստանի նամակ չը կար:

—Լեվ Նիկոլայեվիչ, բոլոր նամակներն էլ արտասահմանից են. Ռուսաստանից ոչ մի նամակ չունէք:

—Այո՛, ինձ յարգողների մեծամասնութիւնը արտասահմանում է:

Ճաշից յետոյ ես իմ խորին շնորհակալութիւնը յայտնեցի նախ՝ Լեվ Նիկոլայեվիչին և ապա նրա հիւրասէր դերդաստանին՝ ինձ ցոյց տուած երկու օրվայ հիւրասիրութեան համար: Երկաթուղու դնացքը Եասենքի կայարանից պիտի դուրս գար երեկոյեան ժամի 6½-ին: Ժամի 4 լինելով՝ Լեվ Նիկոլայեվիչ կարդարեց, որ կառք լծվի ինձ համար: Ես իմ հրաժեշտը տուի և իջայ ներքնայարկը: Քիչ յետոյ վայր եկաւ և Լեվ Նիկոլայեվիչ ու ինձ ընծայեց իր յիշատակին հետևեալ գրքերը. 1) Душеспасительныя наставленія Св. Василія Великаго, 2) Фабіола, 3) Греческій мудрецъ Діогенъ, 4) Христосъ въ гостяхъ у мужика, 5) Римскій мудрецъ Эпиктетъ, 6) Французскій мудрецъ Власъ Паскаль, 7) Жизнь древнихъ христіанъ, 8) Чѣмъ помочь великому горю?

Ես շատ զգացուած էի աշխարհահռչակ ծերունու դէպի ինձ ցոյց տուած ուշադրութիւնից և ասացի նրան.

—Թոյլ տուէք ինձ այսուհետև ձեզ անուանել հայր:

—Ես եօթանասուն տարեկան եմ, իսկ դուք 50. ուրեմն ես ձեր հօր տեղ կարող եմ լինել: Այսուհետև դուք կարող էք միայն ինձ նամակներ գրել. ես էլ ձեր նամակներին կաշխատեմ պատասխանել:

Ես մօտեցայ նրան և խնդրեցի, որ թոյլ տայ ինձ որդիաբար նրա ձեռքը համբուրելու: Բայց նա թոյլ չը տուեց և միայն հայրաբար ինձ հետ համբուրվեց: Ճանապարհվելիս Լեվ Նիկոլայեվիչ ասաց, որ Եասենքի կայարանի պօստատան մէջ իր անունով կան ստացված երկու պատուիրված նամակներ և տալով ինձ պօստատան յայտարարութիւնները՝ ասաց.

—Իմ տեղ ստորագրվեցէք պօստատան մատեանի մէջ, ու ստանալով նամակները մեր կառավարի ձեռքով ուղարկեցէք ինձ:

Ես ուրախութեամբ յանձն առայ կատարել այդ խնդիրքը: Եւ նստելով Լեվ Նիկոլայեվիչի կառքը, հեռացայ իմ պաշտելի հանճարից...

Նոյն օրը երեկոյեան երկաթուղու դնացքը տանում էր ինձ դէպի Նոր-Նախիջևան:

Սրապիոն քահ. Սամուէլեան

պող թշուառ ժողովրդին: Այս դրամներն այժմ ստացվում են. ամսիս 24-ին պիտի վճարեն Հայլի Ավդիլին 365 խալվար ցորենի համար, խալվարը 32 բուբլի և այդ գնով չուկայ պէտք է հանեն վաճառելու. այդ կերպով պիտի վարվեն նաև միւս ամբարատէրերի հետ: Ցոյս կայ, որ ցորենի գինը չօշափելի կերպով կիջնի:

Վերջին պահուն իմացայ, որ Առևտրական բանկի խորհուրդն իրաւունք է տուել այստեղի ճիւղին կրեդիտ բաց թողնել քաղաքին: Ա—Դօ

ՆԱՄԱԿ ԿԱՂՋՈՒԱՆԻՑ

—

Նոյեմբերի 17-ին

Ամսիս 11-ին, այստեղի տանուտէր Ղազար Քանանեանցին սպանող չարագործներին բաց թողեցին 500-ական բուբլի երաշխաւորութեամբ: Այսօր, ամսիս 16-ին, Խառ գիւղից, որտեղացի են չարագործները,—մի խումբ գիւղացիներ եկան Կաղզուան՝ չարագործների պարագլուխ Ս. Ո. Միրիջանեանից գանգատվելու: Վերջինս նախընթաց գիշեր մտնում է մի խեղճ գիւղացու տուն, որտեղ ոչ ոք չի լինում բացի տանտիկնոջից և ուզում է բռնաբարել նրան, սակայն գիշերապահը վրա է հասնում և, հասկանալով գործի էութիւնը, դրսից դուռը փակում է ու իմաց տալիս գիւղի ռէսին: Մինչեռ գիւղացիները մտածելիս են եղել՝ թէ ինչպէս անեն, որ առանց վտանգի բռնեն չարագործին, որը զինված է եղել, վերջինս անվնաս կերպով դուռը կոտրում է ու դուրս թռչում ամբոխի մէջ, որտեղ սկսվում է կռիւը...

Գիւղացիները պահանջում էին դատարանից անմիջապէս հեռացնել գիւղից բաց թողված չարագործներին, որոնց երկիւղից, ինչպէս առաջ՝ նոյնպէս և այժմ չեն կարողանում հանգիստ քնել, հակառակ դէպքում մտադիր էին այդ մասին հեռագրել նահանգապետին: Գիւղացիները դատարանին ներկայացրեցին նաև մի համախօսական, որով պահանջում էին՝ հեռացնել Խառ գիւղից բոլոր Միրիջանեաններին իրանց կուսակիցներով, որոնցից են բոլոր չարագործները և որոնց պատճառով ամբողջ գիւղը մշտական երկիւղի ու տատանման մէջ է: «Կամ մեզ, բոլորիս, հեռացրէք գիւղից, կամ նրանց, հակառակ դէպքում շատ չարագործութիւններ կը բացվեն, ասում էին գիւղացիները դատարանում: Եւ իրաւ, ամբողջ գիւղը ամեն րոպէ երկիւղի մէջ է գտնվում դլխաւորապէս այժմ՝ յայտնի չարագործների ձեռքից, որոնցից երկուսն արդէն առաջուց մարդասպանութիւն էին գործել: Ս. Ո. Միրիջանեան իր մի ամուսաց տանուտէրի պաշտօնավարութեան ժամանակ մտրակի հարուածների տակ սպանեց մի խեղճ գիւղացու, և սակայն ամենաթեթև պատժով պրծաւ շնորհիւ անիծված ժամանակի. իսկ մի ուրիշը (որի միայն անունն եմ լսել)—Մանուկ անունով՝ անմեղ տեղը սպանեց մի չիրակեցի խեղճ գիւղացու, որ ճանապարհորդութեան ժամանակ եղները արածացնելիս էր եղել Խառ գիւղի սահմանում և աքսորանքի ենթարկվեց 5 տարի ժամանակով, որտեղից վերադառնալով՝ մի այլ չարագործութեան մասնակից եղաւ: Զարմանալին այն է, որ այդ տեսակ յայտնի չարագործներին կառավարութիւնը հարկ է համարում ըստ օրինի բաց թողնել երաշխաւորութեամբ, այն էլ մի պարզ չարագործութիւն գործելու միջոցով:

Սակայն չի կարելի չը խոստովանել, որ այս գործում ամենախիստ և անաչառ դիրք է բռնել գաւառապետ պ. Խիստանով, որից սպասում ենք մինչև վերջն էլ նոյն ճշմարիտ ուղղութիւնը և որին յայտնում ենք խորին շնորհակալութիւն իր արդարութեան համար:

Մոռացանք ասել, որ երբ հարց տրվեց դատարան դիմող գիւղացոց, թէ հապա ինչու վկայութիւն չէք տալիս պարզ կերպով Ղ. Քանանեանի սպանութեան համար, որ բոլորդ էլ գիտէք, որ Ս. Միրիջանեանն է իր ընկերներով, որպէս զի պատժվեն չարագործները,—նրանք պատասխանեցին, թէ «մենք բոլորս էլ ամեն բան գիտենք, բայց վախենում ենք վկայել... Գիտէինք որ մի քանի օրից վերջը բաց կը թողնեն, ինչպէս էլ եղաւ, և կը գան ու մեր ջանին կրակ կը դառնան դրանք՝ այդ Աստծու կրակները: Մ. Ղ.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թաւրիզ, նոյեմբերի 14-ին

Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնն իր գոյութեան օրից վայելել է Պարսկաստանի նախկին գահակալ Նասրէդդին-Շահի, ներկայ գահակալ Մուզաֆէրէդդին-Շահի և իր բարձրապատիւ նախարարների սէրն ու հաստակրութիւնը. և, ի նշան այդ համակրութեան, յաճախ արժանացել է նաև նիւթական նուիրատուութիւնների, որոնց համար ընկերութիւնը միշտ երախտագէտ է եղել և կը մնայ, որչափ որ տեսակցութիւն կունենայ:

Ի նկատի ունենալով 2—3 տարվայ ընթացքում Թիւրքաց Հայաստանից փախած բազմակարօտ գաղթականների հոգածութիւնը և ընկերութեան նիւթական անձուկ վիճակը, վարչութիւնս թէհրանում, ընկերութեան պատուաւոր անդամ պ. Բաղդասար Մելիք-Սարգսեանցի միջոցով, դիմեց Վեհափառ Շահի և բարձրաստիճան անձանց օժանդակութեանը և, ուրախութեամբ սրտի, արժանացաւ Նորին Վեհափառութիւն Արեգակնափայլ Շահի և բարձրապատիւ անձնաւորութիւնների հետևեալ նուիրատուութիւններին.

Վեհափառ Շահից՝ 200 թուման (400 բուբլի), Մուշիր-Մուլքից՝ 50 թուման, Սարդար-Աֆխամից՝ 25 թուման, Նասիրը-Սալթանից՝ 50 թուման, Թաւրիզի նախկին նահանգապետ Էմինը-Դովլայից՝ 100 թուման և զանազան բարձր պաշտօնեաներից՝ 128 թուման 4 զուան: Ընդամենը՝ 553 թուման 4 զուան:

Վեհափառ Շահի և վերոյիշեալ անձանց նուիրատուութիւնը համարելով արտայայտութիւն այն համակրութեան, որ ունեն դէպի իրանց հպատակ հայ ժողովուրդը և մեր ընկերութիւնը, վարչութիւնս երախտագիտական պարտք համարեց նաև «Մշակի» միջոցով յայտնել իր անհուն շնորհակալութիւնն ու ակնածանքը Վեհափառ Շահին և նուիրատու անձանց այն քաղցր հոգածութեան համար, որ ունեն դէպի մեզ՝ պարսկահայերս, ընդհանրապէս:

Վարչութիւնս յայտնում է իր շնորհակալութիւնը նաև ընկերութեան պատուաւոր անդամ պ. Բաղդասար Մելիք-Սարգսեանցին իր անխոնջ և բազմաչափ ծառայութիւնների համար, որ միշտ մատուցել է մարդասիրաբար ի նպաստ ընկերութեան գործերի:

Օգուտ քաղելով առիթից, վարչութիւնս աւելորդ չէ համարում կրկին և կրկին խնդրել նուիրատու ազգայիններից իրանց մարդասիրական նպաստը ընկերութեանս գանձարանին, որի կարիքներին են ապրում ընկերութեան մանկապարտէզը, կարուձևի արհեստանոցը, գորգի գործարանը, Լիլավայի ուսումնարաններում սովորող չքաւոր երկսեռ մանուկները և բազմաթիւ թշուառ գաղթականներ՝ մանաւանդ Ատրպատականում տիրող հացի խնդրի ներկայ տագնապալից րօպէին:

Նուէրները կարելի է ուղարկել մեր հասցէին և ընիկ պարսկաստանցի և Բագու բնակվող մեծ. եղբարք Թումանեանների տան միջոցով:

Նախագահ վարչութեան՝
Սրբուհի Ամատունեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թիֆլիսի քաղաքային դումայի վերջին նիստում քննվեց ուպրավայի երկու նոր անդամներ ընտրելու հարցը՝ նախկին անդամներ Իվանենկոյի և Վերմիշևի փոխարէն: Դուման որոշեց ընտրութիւնը յետաձգել մինչև հետևեալ հերթական նիստը, իսկ թեկնածուների արժանաւորութիւնները քննելու համար ընտրել մի առանձին յանձնաժողով: Քուէարկութեամբ յանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ իշխան Գ. Թումանով, բժիշկ Լունկեվիչ, բժիշկ Խուդադով, Գ. Միրզոյեվ, բժիշկ Մելիկով, Ց. Մելիք-Բեղլեարով և Շերշենկո: Նոյն նիստում գնահատողական յանձնաժողովի անդամ ընտրվեց իշխան Ն. Թումանով:

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը, ի նկատի ունենալով, որ միջնակարգ դպրոցների մէջ ուսուցիչներից շատերը, մանկավարժական տեսակէտից անպատրաստ անձինք են լինում և այդ հանգամանքը վնասակար կերպով ազդում է ուսման գործի վրա, դիմել է ուսումնարանական շրջանների բոլոր հոգաբարձուներին, խնդրելով յայտնել, թէ ինչ միջոցներ կարելի է որոնել այդ անյարմարութեան առաջն առնելու համար: Մինիստրութիւնն առաջարկում է մի և նոյն ժամանակ այդ հարցը ենթարկել մանկավարժական ընկերութիւնների և ձեռնհաս անձանց քննութեան: Իր կողմից մինիստրութիւնն այն կարծիքն է յայտնում, որ գուցէ աւելի նպատակայարմար լինի հիմնել կայսրութեան մէջ մի քանի կենտրոնական հաստատութիւններ, որտեղ իրանց անձը մանկավարժութեան նուիրող երիտասարդները, բարձր ուսում ստանալուց յետոյ, յատկապէս ուսումնասիրէին մանկավարժութիւնը տեսականապէս և գործնականապէս, որպէս զի ուսուցիչ նշանակված ժամանակ դեռ նոր փորձեր չանէին աշակերտների վրա:

—

Բելգիական Անտանուն ընկերութեան դիրեկտոր Լոբի, ծանօթանալով այն փոփոխութիւնների հետ, որ արել էր Թիֆլիսի քաղաքային դուման ձիաքաշ երկաթուղու պայմանագրի յօդուածների վերաբերութեամբ, յայտնեց, որ նա ընտնում է այդ փոփոխութիւնները միայն մի բացառութեամբ: Դուման, լսելով այդ յայտարարութիւնը, իր վերջին նիստում ընդունեց Լոբի կարծիքը և այդպիսով վերջացրեց ձիաքաշի վերաբերեալ բանակցութիւնները: Այժմ մնում է իշխան կառավարչապետի հաւանութիւն ստանալը, որից յետոյ պայմանագիրը կը ստորագրվի:

—

Ծաղիկ հիւանդութիւնը կարծես թողել է մանուկներին և սկսել է հալածել հասակաւորներին: Օր չէ անցնում, որ չը լսենք թէ այս ինչ մարդը, կամ այն ինչ կինը հիւանդացել է ծաղկով: Դեռ երբէք այսքան տարածված չէ եղել ծաղիկ հիւանդութիւնը հասակաւորների մէջ:

—

Հոգեկան հիւանդների համար քաղաքի նոր բացած ապաստարանը փոխադրեցին չորս հիւանդ Միքայէլեան հիւանդանոցից, որովհետև այդ ապաստարանում ընդունվում են բացառապէս Թիֆլիսի քաղաքացիները:

—

Մեզ հաղորդում են, որ Քութայիսի նահանգի Կօրէյսուբանի կոչված տեղում այս օրերս տեղի ունեցաւ զուլթանների մրցանդէս: Թիֆլիսից գնացել էին այդ մրցանդէսին ներկայ լինելու մասնակցողներ Գէլովկի, Կանդուրալով և ուրիշներ:

—

Քաղաքային վարչութեան անդամ իշխան Ա. Արզումանովի հիւանդացել է ծաղիկով, և նրա պարտաւորութիւնները այժմ կատարում են վարչութեան մի քանի պաշտօնեաներ:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Թեմական դպրոցի տեսչի և ուսուցիչների մէջ տեղի ունեցած ընդհարումների պատճառով հոգաբարձութիւնը երեք ուսուցիչներ արձակեց»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, նոյեմբերի 7-ին

Վաճառականները արտունչ կ'ընեն՝ թէ ժամանակները շատ ձախող են և շահաբերման գործը երթալով աղէտալի կը դառնայ: Ատեն մը չատ հանդարտ էին, իրենց մնայուն յաճախորդներն ունէին և տարիներ պէտք էր, որ ունեցածնին կարող լինէին ձեռքէ հանել: Բայց հիմա ամեն բան փոխուած է: Ա՛յն վաճառականը, որ իր անցեալ յաջողութեանը վրայ կը վստահի՝ իսկոյն երեսէ կը իյնայ, ետ կը մնայ ու կը կործանի: Հիմա պայքարը կրակոտ է և ամեն օր նորը կը սկսի. ով որ քիչ մը գործունեայ և յանդուգն է՝ անորն է յաղթանակը:

Ձիշդ վաճառականներու պէս միւնոյն տրրատունջը աշխարհի վեհապետներն ու դիւանագէտներն ալ կարող են ընել: Քրիստոնեայ հզօր ազգերու շուրջը դարձող փառքի մոլորակն՝ երթալով պզտիկցաւ. հիմա ազգերը միշտ իրարու կը պատահին և ամեն հնարք ի գործ կը դնեն՝ որպէս զի իրարու ոսք սահեցնեն. հիմա ամեն երկիր զանազան հետաքրքրութեանց ենթակայ եղած է, և, չի կայ դիրք մը՝ որուն դէմ սպառնալիք չը լինի: Անոնք միայն չեն սպառնար՝ որոնք իրենց տկարութիւնը կը ճանչեն:

Արևելքի մէջ, մինչև հիմա, ամենէն մեծ դեր կատարողները Ռուսիոյ, Անգլիոյ և Աւստրիոյ պետութիւններն էին: Այս երեք զօրաւոր ազգերէն իւրաքանչիւրն իրեն մասնաւոր ցանկութիւն ունէր, բայց երեքին ցանկութիւններն ալ Օսմանեան պետութեան այս ինչ կամ այս ինչ մասին վրայ կը տարածուէին՝ առանց հակառակելու: Թէպէտ Ֆրանսան ալ ետ չէր մնացած, նա ալ իրեն համար իր որոշ նպատակակէտն ունէր Արևելքի մէջ:

Հիմա իրաց վիճակն իր գոյնը բոլորովին փոխեց: Ռուսիա, Անգլիա և Աւստրիա իրարու հակընդդէմ կը գործեն Արևելքի մէջ, սակայն պէտք չէ մոռանալ չորրորդ և նոր պետութիւն մ'ալ՝ Գերմանիան, որ ամեն հնարք ու միջոց ի գործ դնելով, վերջապէս, ստեղծեց իրեն համար դիրք մը, որ այսօր մեծ կշիռ ունի Թուրքիայի մէջ, և ան հէնց այս դիրքն աւելի ամրապնդ ընելու համար էր, որ Վիլհէլմ II այս վերջին մեծադղորդ ուղևորութիւնն յանձն առաւ: Ընդհանրապէս կը կարծուի՝ թէ Վիլհէլմ II տեսակ մը զգայախաբ, մեծ զովեստներու սիրահար և ցուցամոլ անձնաւորութիւն մ' է և կը փափաքի, որ միշտ իր վրայ խօսուի, բայց ընդհակառակը, իր ազմկալի և փայլուն երևոյթին ներքև, Ֆրէդէրիկ II-ի դպրոցէն եկած՝ գործնական քաղաքագէտ մ' է նա, անտարակոյս փառքը սիրող՝ բայց աւելի հոգատար՝ իրական հետևանքներու:

Թուրքիան՝ այնքան երկիրներ ձեռքէ հանելէ յետոյ, տակաւին լաւ պատառ մ' է. իր բանակներն այնքան հարուած կրելէ յետոյ՝ տակաւին զօրաւոր են. Վիլհէլմ՝ ինքզինքն այդ բանակներուն պաշտպան կարգած է և կը ջանայ՝ որպէս զի Թուրքիան իր պետութեան շրջանակին մէջ ձգէ՝ ինչպէս Աւստրիան ու Իտալիան: Բայց մէկ օրուան գործ չէ այս, նոյնպէս քայլերին և սուլթանին բարեկամական սերտ յարաբերութիւնն ալ՝ երեկուան գործը չէ:—Բեռլինի մէջ ստորագրուեցաւ, 1878-ին, այն դաշնագրութիւնը, որ Թուրքիոյ բանակներուն՝ յաղթական Ռուսիոյ ձեռք բերածը ետ դարձնել տուաւ. Բեռլինէն դնացին այն սպաներն, որ քսան տարի է ի վեր, պատերազմական նոր մէթոտով կը հրահանդեն Աբդիւլ-Համիդի զօրքերը. Օսմանեան հրետանին և ծովային զօրութիւնները Գերմանիոյ մէջ կազմակերպուեցան. գերման վաճառականութիւնն իր արտադրութիւններով լեցուցած է եւրոպական Տաճկաստանը, Փոքր-Ասիան և Սուրիան. երկաթուղիներու արտօնութիւններն՝ աւելի գերմանացիներուն տրուած են: Հէյլէնիս-Թուրք պատերազմին մէջ՝ առանց ինկատ առնելու Ցունաստանի դահաժառանգ իշխանին հետ ունեցած ազգակցական կապերը, Վիլհէլմ II, բայէ իրաց Թուրքիոյ կողմը բռնեց. Հայաստանի կոտորածները՝ Վիլհէլմի ապաւինելով ի գործ դրաւ սուլթանը այնքան անդթօրէն. Վիլհէլմի շնորհիւ այնքան երկար ատեն քաշքշուեցաւ Կրետէի խնդիրն և իզուր թափուեցան այնքան քրիստոնեայ արիւններ:

Արդ՝ յայտնի կ'երևի բոլոր այս իրողութիւններէն՝ թէ Վիլհէլմ II-ի սոյն ուղևորութիւնն ինչպէս կանուխէն մտածուած ու պատրաստուած բան մ'էր:

Բայց թէ անմիջական հետևանք մը ունեցաւ այդ ուղևորութիւնը.—Այս պահուս, կ'երևի թէ քայլերը՝ երկու բան միտքը դրած էր և երկուքին մէջ ալ բաւական յաջողած է: Առաջինն է՝ Սուլիոյ և Փոքր-Ասիոյ մէջ գերմանական գաղթականութիւններ հաստատել, և երկրորդ՝ գերման կաթոլիկները փրկել Ֆրանսիայի թեարկումենէն: Առաջնոյն համար, ասկից քիչ առաջ, խուսափողական պատասխան տուած էր սուլթանը, բայց Վիլհէլմ բնաւ հոգս չըրաւ, վասն զի նա գիտէ, որ սուլթանը՝ ոչ կարող է մինչև հիմա հաստատուած գերման գաղթականութիւններն իրենց տեղերէն խախտել, և ոչ ալ նոր գալիքներուն դիմադրել:

Գալով երկրորդին՝ Վիլհէլմ արդէն իր կողմը ձգեց բոլոր գերման կաթոլիկները՝ Սիոնի մէջ երկու հազար քառակուսի մէտր տարածութեամբ պատմական դետին մը շնորհելով անոնց և փաղաքշաքան հեռագիր մը ուղղելով պապին: Անտարակոյս մեռեալ տառեր չպիտի մնան այդ հեռագրին մէջ խօսուածները: Նոյնպէս Երուսաղէմի լատինաց պատրիարք՝ մսնսէնեօր Պիավիին ըրած բանախօսութիւնը, Ս. Յարութեան տաճարի մէջ, գերման վեհապետին ընդունելութեան ժամանակ, մեծ ազդեցոյց է, թէ Վիլհէլմ շատ ճարտարութեամբ ըստ բաւականին դրաւեց կաթոլիկութիւնը և վտանգեց Ֆրանսայի:

Ապագան աւելի լաւ պիտի պարզէ ճշմարտութիւնը: Գիրուկ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կանդիայում մարդասպանների և խռովարարների դատի քննութեան ժամանակ միջազգային դատարանում կարդացվեց մի մահմեդականի ցուցմունք, որը յայտնեց, թէ սպանութիւնների նախընթաց օրը Էդհէմ-փաշան հաւաքեց բոլոր ազդեցիկ մահմեդականներին և յայտնեց, որ նրանք պարտաւոր են 24 ժամում կոտորել քաղաքում գտնվող բոլոր քրիստոնեաներին: Նոյն վկայի խօսքով, Էդհէմ-փաշան այդ հրաւէրը կարդաց մայոր Զէրչիլի ներկայութեամբ, որը սաստիկ կերպով բողոքեց և դրա համար Էդհէմ-փաշան հրամայեց դուրս անել նրան ժողովից:

—Գերմանական եպիսկոպոսները վճռեցին շնորհակալութեան ուղերձ ներկայացնել Վիլհէլմ կայսրին գերմանական կաթոլիկներին հոգաբաժին ընծայելու համար Երուսաղէմում:

—Հնդկաստանի հիւսիս-արևելեան մասում նորից ապստամբութիւն է ծագել. այս անգամ ապստամբների պարագլուխ Հատտի այն մոլլան է, որին անգլիացիները առաջ խելագար էին կարծում: Անգլիական կառավարութիւնը որոշել է մի նոր արշաւախումբ ուղարկել:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Варшавскій Дн.» լրագիրը որդիական սիրոյ հետևեալ դէպքն է հաղորդում.

«Այս օրերս Երուսաղիմսկայա փողոցով անցնում էր գիւղական մի սայլ, որի վրա դրված էր մի բաց դագաղ, իսկ դագաղի մէջ պառկած էր մի կենդանի ծեր մարդ: Ոստիկանը կանգնեցրեց այդ օտարոտի սայլը, որը իր վրա էր դարձնում բոլոր անցուդարձ անողների ուշադրութիւնը: Այն ժամանակ սայլապանը, մի ջահել գիւղացի, բացատրեց, թէ ինքը Վարշավայի հիւանդանոցից վերցրեց իր հիւանդ հօրը: Եւ որովհետև ծերունին, հաւանական է, որ կը մեռնի, այդ պատճառով տանում է տուն, որ տանը մեռնի, իսկ ճանապարհին առաջուց դագաղ ա-

ռաւ, որի մէջ և պառկեցրեց ծերունուն։ Զը նայելով հոգատար որդու բացատրութեանը, թէ իր հօր համար մի և նոյն է, թէ ուր է պառկած, ստիպեց նրան դաղաղից հանել և պառկեցնել սայլի մէջ։ Որդին շատ դժգոհ մնաց ստիպանի միջամտութիւնից. դժգոհ էր, կարծես, և մեռնողը, որը հեզութեամբ հաշտվել էր կենդանի թաղվածի դրութեան հետ»։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԱՐԻԶ, 24 նոյեմբերի։ Պիկար դիմեց վճռաջինջ առեանին, խնդրելով որոշել՝ թէ ինչ տեսակ դատարանի է նա ենթարկվում. մի և նոյն ժամանակ մատնացոյց է անում քրէական դատավարութեան օրէնսդրքի մի քանի յօդուածների վրա, մանաւանդ 527 և 586 յօդուածների վրա։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 24 նոյեմբերի։ «New York Herald» հաղորդում է, որ Մակ-Կինլէյի հրովարտակի մէջ առաջարկված չի լինի որոշ քաղաքականութիւն Ֆիլիպպեան կղզիների, Պօրտօ-Ռիկոյի և Կուբայի վերաբերմամբ։ Հրովարտակը կը պահանջի զօրքի թիւը մեծացնել մինչև 100,000, և անհրաժեշտ կրեդիտ նաւատորմը զօրեղացնելու համար։ Ապա Մակ-Կինլէյ անհրաժեշտ կը համարի դեռ առժամանակ պահպանել զինուորական հարկը։ Մաքսային բէֆօրմների օրէնքին առանձին նշանակութիւն չի տրվի։ Վերջը նախագահը կառաջարկի Նիկարագուայի ջրանցքի կառուցումը ամերիկական դրամների օգնութեամբ։

ՊԱՐԻԶ, 24 նոյեմբերի։ Ի նկատի ունենալով Պիկարի պահանջը՝ որոշել այն դատարանի տեսակը, որին ինքը ենթակայ է լինելու, պատգամաւոր Ֆուրնիէր յետաձգեց իր հանցապնդումը, մինչև որ վճռաբեկ ատեանի վճիռ կայացնելը։ Սենատոր Ֆաբր նոյնպէս յետ վերցրեց իր հարցապնդումը։

Սոցիալիստական մի քանի պատգամաւորներ պատգամաւորների ժողովը կը մտցնեն մի առաջարկութիւն այն բանի մասին, որպէս զի բողոքատու զանգատները զինուորական դատարանի վճիռների դէմ կարելի լինի խաղաղ ժամանակ միշտ ներկայացնել վճռաբեկ ատեանին։

Կ. ՊՕԼԻՍ, 24 նոյեմբերի։ Կրետէից ուղարկվեց այնտեղ մնացած ռուսաց լեռնային արտիլերիայի մի մասը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատար.՝ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԺԱՌԱՆԳՆԵՐ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մ ա ր դ ա տ ա ր № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱՌՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ յերեկվայ 4 ժամին և 15 րոպէին. Թ է ֆ լ է ս է հասնում առաւօտեան 8 ժամ 38 րոպէին։ տուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 20 րոպէին. Բ ա թ ո ւ մ է հասնում երեկոյեան 8 ժամ և 52 րոպէին։

Մ ա ր դ ա տ ա ր № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ երեկոյեան 10 ժամ 50 րոպէին. Թ է ֆ լ է ս է հասնում երեկոյեան 5 ժամ և 9 րոպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ՝ երեկոյեան 6 ժամ 10 րոպէին. Բ ա թ ո ւ մ է հասնում առաւօտեան 7 ժամին։

Մ ա ր դ ա տ ա ր № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ առաւօտեան 8 ժամ 30 րոպէին. Թ է ֆ լ է ս է հասնում երեկոյեան 8 ժամ 30 րոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս՝ երեկոյեան 9 ժամ 15 րոպէին. Բ ա գ ո ւ է հասնում յերեկվայ 12 ժամ 59 րոպէին։

Մարդատար № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 40 րոպէին. Թ է ֆ լ է ս է հասնում առաւօտեան 9 ժամ 55 րոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս առաւօտեան 11 ժամ 20 րոպէին. Բ ա գ ո ւ է հասնում առաւօտեան 5 ժամ 42 րոպէին։

ԱՌՈՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1¼—2¼ ժ. ներքին և միասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Ն. ՇՊԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (և լեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.

Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Հատախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։ Հիւանդանոցի վերատեսուչ՝

54—150 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Վրաստանի եւ Իմերէթի

ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՑԻՆ ԿՕՆՍԻՍՏՕՐԻԱՅԻ ԱՏԵՆԻ մէջ նշանակված է ածուրդ սոյն նոյեմբերի 27-ին առանց կրկնաձրդի՝ կապալով տալու եկեղեցական կղզին, որ գտնվում է Վանայ աւագ եկեղեցւոյ հանդէպ։ Մասնակցել ցանկացողները պէտք է ներկայացնեն սահմանեալ գրաւական, իսկ պայմանների հետ կարող են ծանօթանալ կոնսիստորիայի դիւանատանը։

Անդամ կոնսիստորիայի՝

2—3 Գրիգոր աւագ քահ. Տէր-Բարսղեանց



Շնորհիւ ժամացոյցներ պատրաստելու կատարելագործութեան և մեծ քանակութեամբ վաճառվելուն, ես կարողացայ՝ անցեալ տարվայ նոյեմբերի 15-ից սկսած, ծախել տղամարդկանց գեղեցիկ և դիմացկուն ժամացոյցներ, արծաթեայ ժամացոյցներ՝ 84 պրօբանի, անձայն, բոլոր երեք ծածկոյցներն էլ արուեստական ոսկուց, որ ոչնչով չի զանազանվում իսկական ոսկուց. անկէր կոչված ժամացոյցը, որ բանում է 15 քարով, մեխանիզմը խիստ ամուր, խնամքով վերստուգած, լարումն առանց բանալիքի՝

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 10, 12 և 14 ՐՈՒԲԼԻՈՎ

(2 հատ 19, 23 և 26 բուբլի)։ Նոյնպիսի ժամացոյցներ՝ միայն բանալիքով լարվող, մի բուբլիով էժան. նոյնպիսի ժամացոյցներ՝ կանանց համար, մի բուբլիով թանգ։ Գրաւոր երաշխաւորութիւն 6 տարվայ համար։ 2 բուբլի սկզբնավճար ստանալուն պէս՝ անմիջապէս կուղարկվեն ուղած ժամացոյցները։ Հասցէն՝ Торговой Фирмѣ

Я. М. ВАРКОВИЦКАГО

Փընեվի ժամացոյցների պահեստը Վարշավում, Պանսկայա, 5. (չ) 8—10



ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ յայտնում է ժողովրդական նիւթեր հաւաքողներին, որ Ընկերութիւնս այսուհետև հրատարակելու է միայն այնպիսի ժողովրդական նիւթեր, որոնք բաւականաչափ մշակված են և առանձին խմբագրութեան կարօտ չեն։ 2—3

Լոյս տեսան

ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

— 1899 —

ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Ծոցի օրացոյցն ունի հարուստ յաւելուած՝ երաշխանով և զուարճալի վիճակարանով։ Պատի օրացոյցի իւրաքանչիւր թերթի երկրորդ երեսի վրա կան՝ ընտիր մտքեր, անեկդոտներ, առածներ, ժողովրդական երգեր, հանելուկներ և զանազան հետաքրքիր տեղեկութիւններ։

Գները՝ ՊԱՏԻՆԸ—50 կոպ.
ԾՈՑԻՆԸ—20 կոպ.

Դիմել՝ АЛЕКСАНДРОПОЛЬ, Карапету Апинянъ.
(չ.) 6—6

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի

ԱՂԷՔՍԱՆԴՐ ԹԱՏՈՒՐԵԱՆԻ

Բանաստեղծութիւնները

Երկրորդ հատոր

(Մօտ 225 երես, գինն է 1 բուբ.)

Ցանկացողները պիտի դիմեն հեղինակին՝ Москва, Каретный—Садовая, меб. ком. Ивановой, № 10. (չ. ո.) 5—10

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1899 ГОДЪ НА ГАЗЕТУ

„КАСПІЙ“

(XIX годъ изданія).

въ 1899 году „Каспій“, въ Баку, ежедневно, будетъ выходить по прежней программѣ газеты литературной, общественной и политической, съ обширнымъ нефтянымъ отдѣломъ, при той же самой подписной цѣнѣ.

ПОДПИСНАЯ ЦѢНА: съ доставкой: на 12 мѣс. 7—р., на 11 мѣс.—6 р. 50 к., на 10 мѣс.—6 р., на 9 мѣс.—5 р. 50 к., на 8 мѣс.—5 р., на 7 мѣс.—4 р. 50 к., на 6 мѣс—4 р., на 5 мѣс.—3 р. 50 к., на 4 мѣс.—3 р., на 3 мѣс.—2 р. 50 к., на 2 мѣс.—2 р. и на 1 мѣс. 1 р.

Съ пересылкой: на 12 мѣс.—8 р. 50 к., на 11 мѣс.—7 р. 50 к., на 10 мѣс.—7 р., на 9 мѣс.—6 р. 50 к., на 8 мѣс.—6 р., на 7 мѣс.—5 р. 50 к., на 6 мѣс.—5 р.. на 5 мѣс.—4 р. 50 к., на 4 мѣс.—4 р., на 3 мѣс.—3 р., на 2 мѣс.—2 р. и на 1 мѣс.—1 руб. 50 к.

ЗА ГРАНИЦУ: на годъ 13 руб.
„ „ „ полгода 7 руб.

Допускается разсрочка платежа подписныхъ денегъ на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится не менѣе 3 руб. городскими и 4 руб. 50 коп. иногородными подписчиками; затѣмъ 15-го февраля 2 руб. и 15-го марта 2 руб.

ИНОГОРОДНЫЕ АДРЕСУЮТЪ СВОИ ТРЕБОВАНІЯ ВЪ БАКУ, ВЪ РЕДАКЦІЮ ГАЗЕТЫ „КАСПІЙ“.

Подписка принимается: въ Баку—въ конторѣ газеты, Николаевская улица, домъ Г. З. А. Тагіева; въ Тифлисѣ—въ книжн. магазинѣ Хиддекеля и у И. К. Словинскаго; въ Кутаисѣ—при книжномъ магазинѣ братьевъ Чиладзе, противъ собора, на Тифлисской ул., собственный домъ; въ Батумѣ—при книжно-газетномъ агентствѣ М. Николадзе; въ Елисаветполѣ—у Г. А. Альтгаузена, при его торговлѣ аптекарскими товарами; въ Москвѣ—въ конторѣ Мэтцль; въ Н-Новгородѣ—въ Рождественскомъ газетномъ кіоскѣ и во всѣхъ извѣстныхъ книжныхъ магазинахъ столицъ и провинціи. 1—3

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, ԹԻՖԼԻՍՈՒՄ

Վաճառվում են հետևեալ նոր գրքերը.

	Ր.	Կ.
ԱՂԱՆԵԱՆ Գ. աւ. ք. Աղօթատետր տարրական դպրոց. հայ մանուկ. համար. Թ. 1898.	—	10
» Պատի օրացոյց 1899 թ. համար	—	50
ԵՐԻՑԵԱՆՑ Ա. «Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցի» Թ. 1898 թ. գ. 2 ր. փառակազմ	3	—
ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ Իս. Սանտին, վանքի վիմատիպ պատկերով. Թ. 1898 թ. . .	—	30
ԹԱՌԱՅԵԱՆՑ Ս. Հայ ժողովրդի արհեստագործութիւնը Թ. 1898 թ. . . .	—	40
ԼԵՐՄՕՆՏՕՎ, Դև. Արևելեան վէպ. Թ. 1898 թ.	—	15
ԻԻՐԻ ՂԱԶԻ-ԲԷԿ. Պատմուածքներ Զէրքէզների կեանքից. Մ. 1898	—	25
ԴԸ-ՎԱՐԵՆՑԻ. Օղը և կեանքը. Թ. 1898	—	10
Գ. Բրանդէս. Բանաստեղծը և հերոսը. Թ. 1898 թ.	—	25
ԱՒԵՏԻՔԵԱՆ ՍՏ. «Իրլանդիայի դատը», Բագու, 1898.	—	80
ЭЗОВЪ. Г. А. Сношенія Петра Великаго съ Армянскимъ народомъ. Архивные документы. СПБ. 1898.	5	—
«БРАТСКАЯ ПОМОЩЬ ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ» изд. 2.—*փառակազմ (սակաւաթիւ)*	4	25
Նոյն տեղը վաճառվում են՝		
ԵՐԻՑԵԱՆՑ ԱՂ. Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք 19-րդ դարում. 2 հ. *իւրաքանչիւրը*	2	—
» Патріархъ всѣхъ Армянъ Нерсесъ 5-й Кн. Мих. Сем. и Кн. Елисав. Ксаверіевна Воронцовы въ ихъ частной перепискѣ. Т. 1898 г. ц.	1	50
ՏԻԳՐԱՆՆԵԱՆ ԲԺ. Լ. *բժշկարան* 1892 *թ. գ. 2 ր. կազմած*	2	40
ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ պ. *գեղարուեստական այբուբ հայ գործիչների գ.* . . .	3	—

Պէտք է դիմել ուղղակի այս հասցէով՝ ТИФЛИСЪ, Центральная Книжная Торговля, *իսկ արտասահմանից՝* TIFLIS, Libraire Central. (չ.) 2—5



!!! ՀԱԶՈՒԱԳԻՒՏ ԴԷՊՔ !!!

Երկար ջանք գործ դնելուց յետոյ, վերջապէս, ինձ աջողվեց հնարաւորութիւն ստանալ վաճառելու՝ իր բանելովը և գեղեցկութեամբ նշանաւոր Ժընեվի «Փաւորիտ» ժամացոյցները՝ բաց, սև պողպատից, ռեմենտուար, լարված և խնամքով ստուգված, ծածկի վրա ոսկէ զարդարանք, որի վրա, ըստ ցանկութեան պատուիրողի, փորագրում եմ նրա ժամանակագրությունը գեղեցիկ շղթայով և ամերիկական ոսկէ բրելոկով՝

ՄԻԱՅՆ 5 ՐՈՒԲ. 25 ԿՕՊ.

2 հատ պատուէր տուողին 50 կոպ. զիջումն է լինում, 3 հատի համար՝ 1 բուբլի։

ՆՈՅՆՊԻՍԻ՝ ԿԱՆԱՆՑ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ 1 ՐՈՒԲԼԻՈՎ ԹԱՆԴ։

Գրաւոր երաշխաւորութիւն 6 տարվայ համար։ Ուղարկվում է 1 բուբլի սկզբնավճար ստանալուց յետոյ։

Հասցէն՝ *ТОРГОВОЙ ФИРМѢ* Г. КОЛТУНЪ *ВЪ ВАРШАВѢ, складъ американскихъ и женевскихъ часовъ.*

Բաղմաթիւ շնորհակալական և գովասանական նամակներ։

(չ) Պրէյս-կուրանտներն ուղարկվում են ձրի։ 3—7

ՈՒՐԲԷՆ L'URBAIN

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ՝ ԿԵԱՆՔԻ, ԴՐԱՄԱԳԼԽԻ, ՕԺԻՏԻ, ՀԱՍՈՑԹՆԵՐԻ և այլն ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ, առանձնաշնորհումներով՝ հիւանդութեան և աշխատելու անընդունակութեան դէպքերում, և մասնակցութիւն ունենալով զուտ արդիւնքի մէջ հէնց ապահովագրութեան առաջին տարուց սկսած։ Գրասենեակը՝ Անդրկովկասի, Անդրկասպեան երկրի, Թիւրքեստանի և Բուխարայի համար՝ գտնվում է Թիֆլիսում, Միքայէլեան փողոց, տուն Ամիրաղովի № 103։

Գլխաւոր լիազօր՝ ԲԱԳՐԱՏ ԳԵՐԱՍԻՄՕՎԻՉ ՏԷՐ-ՄԱԹԷՈՍԵԱՆ
Տեսուչ՝ ՆԻԿՕԼԱՅԻ ԳԵՐԱՍԻՄՕՎԻՉ ՏԷՐ-ՄԱԹԷՈՍԵԱՆ

Տեղեկութիւնները և բրօշիւրները տալիս են ընկերութեան դրօշակները կայսրութեան բոլոր քաղաքներում։ (ամս. 10, 25) 11—20

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼԷՕ

ՄԷԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ

(Պատմական վէպ, 755 երես)

Գինը 1 ՐՈՒԲ. 30 ԿՕՊԷԿ (ոսկեկազմ 2 բուբլի)

Ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ—հեղինակի մօտ («Մշակի» խմբագրատանը) և Կենտրոնական գրավաճառանոցում։ ԲԱԳԻՈՒՄ—պ. Ներսէս Դաւթեանցի մօտ, Ա. Ի. Աղամովի գրասենեակ. ՇՈՒՇՈՒՄ—Բագրատ Տէր-Սահակեանցի գրավաճառանոցում։

Հեղինակի հասցէն՝ *ТИФЛИСЪ, редакція „Мшакъ“.* 5—10

Дозволено цензурою, Тифлисъ, 24 Ноября 1898 г.

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.